ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ, *Միջնադարյան Գետարգելի (Զագավանքի) պատմությունը, Ե., ԱՀԱ Պոլիգրաֆ, 2014, 80 էջ:*



Հրատարակվել է բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Մխիթարյանի «Միջնադարյան Գետարգելի (Զագավանքի) պատմությունը» պատկերազարդ աշխատությունը: Հայ հոգևոր-պաշտամունքային վայրերի, եկեղեցիների ու վանքերի մասին բազում գրքեր կան: Այս աշխատությունը մի լրացում է այդ շարքին այն առումով, որ միջնադարյան Հայաստանում ոչ փոքր դեր ունեցած Գետարգելի կամ Զագավանքի պատմությունը մինչև օրս ամբողջացված չի եղել, թեև այն մայրաքաղաքից «մեկ քայլի» վրա է գտնվում, և թվում է՝ վանքի մասին նոր բան ասել հնարավոր չէ:

Գիրքը բաղկացած է ներածությունից և երեք մասից: Առաջի-նում ներկայացված է Գետարգելի մասին ավանդազրույցը, երկրորդում՝ սրբավայրի պատմությունը, իսկ երրորդում 1270 թ. այնտեղ ընդունված եկեղեցական կանոններն են:

Սկզբում անդրադարձ է կատարված «Գետարգել Ս. Նշանի պատմությունը» ավանդազրույցին, որը նվիրված է Գետարգել Ս. Նշանին՝ Քրիստոսի Խաչափայտի մասունքին (այժմ՝ մյուռոնեփեքի ոսկե Խաչը), ու նրանով կատարված հրաշքներին: Ըստ ավանդազրույցի՝ Հռոմի հայրապետ Մեղբեստրոսը (Եվսեբիոսը 314-335 թթ.) Գր. Լուսավորչին է նվիրում Խաչափայտի մասունքը և Ղուկաս ավետարանչի ձախը: Խաչափայտի մասունքով դարեր շարունակ հայոց կաթողիկոսները հրաշքներ են կատարել: Նրանցից մեկը՝ Տեր Պետրոսը, Տրապիզոնում Կոնստանտին Մոնոմախի ներկայությամբ կանգնեցրել է գետի ընթացքը և ստացել Գետադարձ մականունը: Նշանը երկար ժամանակ պահվել է Անիի մեծակա Արգինայի վանքում, որտեղից հավանաբար XIII-XV դդ. ընթացքում տեղափոխվել է Զագավանք: Այս պատճառով նախկին Զագավանքը կոչվել է նաև Գետարգել: Նշված ավանդազրույցը մեզ է հասել Մատթեոս Ուռհայեցու «Ժամանա-

կագրություն» երկի և Մաշտոցյան Մատենադարանի թիվ 995 և 4505 ձեռագրերի շնորհիվ: Ավանդագրույցի բնագիրը ռուսերեն է թարգմանել և բազմակողմանիորեն ուսումնասիրել նշանավոր հայագետ Ն. Մառը դեռևս 1895 թվականին:

Գրքի երկրորդ մասը նվիրված է միջնադարյան հայտնի միաբանության կյանքին, որը VII դարից ի վեր կրոնական և մշակութային նշանակալից դեր է ունեցել մեզանում: Վերջին հնէաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ս. Գևորգ եկեղեցու հիմքում կան անգամ վաղքրիստոնեական շինության հետքեր: Դրանք կարող են թվագրվել V դարով, սակայն այս, ինչպես և ողջ հնավայրի մեծամասշտաբ պեղման ու գիտական ուսումնասիրությունների մասին խոսելը դեռ վաղ է: Առաջին շինությունն արդեն նշված խաչաձև հորինվածքով Ս. Գևորգ եկեղեցին է: Ըստ պատմական տեղեկությունների՝ սկզբում այստեղ են պահվել նահատակ Դավիթ Դվնեցու մասունքները: 1270 թ. Վարդան վարդապետ Արևելցու, այս վիճակի եպիսկոպոս Գրիգորի ջանքերով և իշխաններ Խոշաքի, Պռոշի, Սադոնի ու Սմբատի կամքով և հայոց հայրապետ տեր Հակոբ Ա Կլայեցու (1268-1286 թթ.) համաձայնությամբ այստեղ գումարված ժողովում ընդունվել են եկեղեցական կանոններ: 1293 թ. կառուցվել է նաև Ս. Կարապետ մատուռը, որտեղ և հետագայում պահվել է Ս. Նշանը: Սրբավայրում կառուցվել են տնտեսական նշանակության շինություններ: Նրա պարսպապատման գործն իրականացրել է Սիմեոն Ռաբունապետը 1428 թվականից (իր մահվանից) առաջ: Յավոք, նա չի հասցրել կառուցել իր երազած նոր եկեղեցին: Այստեղ ապրել ու գործել են շատ նշանավոր այլ հոգևոր գործիչներ՝ թերևս Զաքարիա Զագեցուց (855-877 թթ.) մինչև Թադևոս Զագավանեցի (Բոկիկ ճգնավոր՝ 1317-20 թթ.), Սարգիս կրոնավորը, որ 1441 թ. Կաթողիկոսարանը Սսից Էջմիածին տեղափոխողներից մեկն է, վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետը (1708 թ.) և այլք: 1679 թ. մեծ երկրաշարժը խաթարել է սրբավայրի բնականոն կյանքը: Փլվել են երկու մատուռները և տնտեսական շինությունները՝ պարիսպներով հանդերձ: Ճիշտ է, դեռ մեկ դար կյանքը այստեղ չի դադարել, բայց սրբավայրն աստիճանաբար անշուք է դարձել: XIX և հատկապես XX դարում սրբավայրը հողին էր հավասարվել: Շատերը փորձել են ինչ-որ բան անել, սակայն չի հաջողվել: Վերջապես XXI դարում հնարավոր է դարձել գողտրիկ եկեղեցիները վերականգնել: Զագավանքում 1270 թ. գումարվել է միջեկեղեցական մեծ ժողով: «Ժողովի պատճառն այս է, -գրում է Վարդան Արևելցին, - որ անտեսված էր եկեղեցու խորհուրդը և քրիստոնեության աստվածեղեն հավատն ու պատիվը»: Ուրեմն նպատակն էր՝ հավատը կրկին ամրապնդել: Ժողովի Կանոնները դրան են նվիրված և բաղկացած են երկու մասից: Ս. Մխիթարյանը նշում է, որ կանոնների մի մասը վե-րաբերում է քրիստոնյա աշխարհականներին, իսկ մյուսը՝ վանականներին: Աշխարհականներից պահանջվում է Աստծո անունը բարձր պահել, լինել պահեցող, զերծ մնալ հայհոյախոսությունից: Սահմանվել են տարիքային ցենզեր, ըստ այդմ՝ թույլատրել տղային 15, իսկ աղջկան 14 տարեկանում

ամուսնանալ: Աղջկա տարիքը 12-ից պակաս չպիտի լիներ: Քահանաներից պահանջվում էր չկատարել կրոնական ծեսեր, եթե դրա իրավունքը չունեին՝ օծված չլինելու պատճառով: Նրանք իրավունք չունեին նվերներ ընդունելու, իսկ եթե հավատացյալները մեծարժեք նվերներ էին տալիս, ապա դրանք պետք է մնային եկեղեցուն: Միայն ինքնակամ տրված զգեստները, մատաղներից որոշ բաժին և գարնան աշխատանքների ժամանակ ցուցաբերված վարուցանքի օգնությունը կարող էին ընդունել իրենց հավատացյալներից: Քահանան պսակի ժամանակ պարտավոր էր օգտակար խորհուրդներ տալ նորապսակներին: Իսկ միայնակյացների համար ասվում է, որ վանքում կողմնակի մարդիկ կամ վանքին չպատկանող անասուններ չպիտի լինեն: Վանականները և նրանց ստորադրյալները գործող օրենքներով պիտի հարաբերվեին, դիրքի չարաշահումն անընդունելի էր: Ովքեր չէին կարող միայնակյաց լինել, կարող էին 15 տարեկանում ընտանիք ստեղծել, դառնալ դպիր և այլն: Ընտրվածներն էլ պիտի գնային ժողովրդի մեջ և ջերմեռանդորեն քարոզեին հանուն Աստծո:

Գետարգելը կարևոր սրբավայր է եղել: Այն այսօր էլ սիրված մի վայր է քրիստոնյա հայ և օտարազգի հավատացյալների ու այցելուների համար, օրեցօր ավելի է շենանում և գեղեցկանում, ունի աչքի ընկնող հուշարձաններ: Այստեղ անցկացվում են ժողովրդական տոներ, և մարդիկ կատարում են ուխտագնացություն: Իրավամբ Սարգիս Մխիթարյանի գիրքը գալիս է լուսավորելու և տեսանելի դարձնելու ուխտագնացության հոգևոր այդ ճանապարհը:

ՊՈՂՈՍՅԱՆ Ն. Բ.
Բանասիրական գիտությունների թեկնածու